ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

18.06.2015թ.
250-ի 8

ՀՀ ազգային ժողովի աշխատակազմի
ղեկավար-գլխավոր քարտուղար
պարոն Հրայր Թովմասյանին

## Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թովմասյան,

Մեզ է դիմել "Դիսըբիլիթի ինֆո" տեղեկատվական ՀԿ-ն եւ խնդրել է իրեն օգնել տեղեկություն ստանալու հարցում: 2015թ.-ի հունվարի 17-ին ՀԿ-ն դիմել է ՀՀ Ազգային Ժողովին՝ իր գրությանը կից ներկայացնելով դիմում disabilityinfo.am կայքի լրագրողի հավատարմագրման համար: Մինչ օրս ՀԿ-ն որեւէ պատասխան չի ստացել ի պատասխան իր գրության կամ հավատարմագրման մասին դիմումի:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և "Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք հայտնել, թե ի՞նչ փուլում է "Դիսըբիլիթի ինֆո" տեղեկատվական ՀԿ-ի դիմումի (գրության) քննարկումը եւ ե՞րբ (ի՞նչ վերջնաժամկետում) պատասխան կտրվի ՀԿ-ին:

"Տեղեկատվության ազատության մասին" ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան